տի գար նա: Ճաշի ժամից յետոյ: Արդեօ՞ք կը վերջանար այդ ճաշոայ ժամը, թէեւ կէսօրից շատ էր անցել, եւ մենք սկսեալ առաւօտից ոչինչ կերած չէինք:

Դրսում մրրիկը դեռ չէր դադարել: Կատաղի քամին տակաւին մռնչում էր: Ներս մտաւ նաւաստին, անապատումը իր ուղտը կորցրած արաբի նման, տխուր եւ յուսահատ դէմքով: Երբ ես սկսեցի մխիթարել, նա պատասխանեց.

— Ես այնքան չեմ ցաւում, որ նաւակս կորցրի, այլ մտածում եմ, թէ ինչպէ՞ս պէտք է գիշերը անցկացնեմ այստեղ:

— Ինչո՞ւ:

— Կը տեսնէք, թէ որպէս պիտի տանջեն մեզ...

Նա չբացատրեց, թէ այդ տանջանքը ինչո՛ւմ պէտք է լինէր, բայց նա էլ ինձ նման սկսեց գանգատոել իր քաղցածութեան մասին:

— Ինչո՞ւ դուք Ծովիկի դրած հաւերը նետեցիք ծովը, — սկսեցի ես յանդիմանել նրան:

— Դու կարծում ես, եթէ մնացած լինէին, կարո՞ղ էիր ուտել, — ասաց նա, ուղիղ իմ աչքերի մէջ նայելով: — Այստեղ, եղբայր, միս չեն ուտում, եւ ուխտաւորներին արգելուած է իրանց հետ միս բերել, որ վարդապետների ախորժակը չգայթակղեցնեն:

Ինչ բանի դէմ բողոքում էր Եզնիկը հինգերորդ դարում, նոյն բանի դէմ բողոքում էր անկիրթ նաւաստին այժմ:

— Ուրեմն մատաղներ չե՞ն մորթում այստեղ, — հարցրի նրանից:

— Այդ կղզու վրայ անկարելի է արիւն թափել: Մատաղները մորթում են «դրսի տանը»: այնտեղ պատրաստում են եւ այստեղ ուտում են: Այդ լինում է տարին մի անգամ միայն, երբ բազմաթիւ ուխտաւորներ են գալիս:

«Դրսի տունն» կոչում էր նաւաստին կղզու հանդէպ՝ ցամաքի վրայ գտնոող տունը, որ պատկանում էր անապատին: Այդ տունը ջրային ճանապարհով կղզուց մէկ ժամու կամ աւելի պակաս հեռաւորութիւն ունէր: Այնտեղ էր զետեղուած վանքային բոլոր տնտեսութիւնը: Անապատում ուրիշ ոչինչ չէին շինում, միայն աղօթում էին ու ճգնում: Իսկ այնտեղ գործ կար, որի մասին պիտի խօսեմ, երբ դուրս կը գանք «դրսի տունը»:

Վերջապէս ներս մտաւ աբեղան եւ հրաւիրեց մեզ սեղանատունը: Դա մի ընդարձակ սենեակ էր, որի երկարութիւնը չորս անգամ աւելի կը լինէր, քան թէ լայնութիւնը: Սենեակի երկարութեան չափով, մէջտեղում շինուած էր քարեայ անշարժ սեղանը, որի երկու կողմից զուգահեռաբար ձգուում էին